ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման- Արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում

Մասնակից՝ Մուքոյան Մելինե

Դպրոց՝ Պտղունքի <<Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Վերապատրաստող՝ Ավետիսյան Կարինե

Վաղարշապատ 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սկսած Հին Արևելքից պատմության ուսումնասիրության գործնական նշանակությունը լավ էին հասկանում պետական ղեկին կանգնած խոշոր գործիչները և խրախուսում էին ժամանակի պատմիչներին գրելու, ուսումնասիրելու պատմությունը՝ հետա պընդելով իրենց նպատակները: Ըստ այդմ պատմությունը պետք է գրվեր այնպես, որ արդարացներ, փառաբաներ տվյալ թագավորի, զորավարի գործունեությունը: Սա մի կողմից վկայում է պատմության իմացության կարևորությունը, իսկ մյուս կողմից նրա գործնական, կիրառական նշանակությունը: Այդ մեծ անհատները փորձում էին մնալ պատմության մեջ, թողնել այնտեղ ինչ-որ հետք: Այս խնդիրներն էին հետապնդում նաև հայ պատմիչները: Որպեսզի այս ամենն առարկայազուրկ չլինի, բերենք մի քանի օրինակներ.

Հերոդոտոսը նշում է, որ իր գիրքը գրել է, որպեսզի ներկայացնի և ժամանակի ընթացքում մարդկանց գործերից ոչ մեկը չջնջվի մեր հիշողությունից, քանի որ եթե չլինի գրավոր պատմությունը, ապա որքան էլ մեր հիշողությունը լավ լինի, մենք չենք կարողանա մեր հիշողությունում պահպանել ամբողջ պատմության զարգացման գործընթացը:

Թուկիդիտեսն իր աշխատությունն ավարտում է հետևյալ խոսքերով. <<Իմ աշխատությունը հաշվարկված է ոչ այնքան այն բանի համար, որ այժմ ծառայի որպես բանավեճի առարկա, որքան դառնա հավերժական ձեռքբերում>>: Սրանով նա ուզում է ասել, որ պատմության միջոցով են հավերժացվում հասարակական-քաղաքական երևույթները, անհատի դրական կամ բացասական գործունեությունը և այլն:

Ամենախոշոր հռետորներից մեկը՝ Ցիցերոնը, նույնպես բարձր է գնահատում պատմության դերը, և, ըստ նրա, պատմությունը ժամանակների ականատեսն է, ժամանակների վկան, ճշմարտության լույսը, հիշողության կյանքը և բարիքի ուսուցիչը: Ի դեպ Ցիցերոնի այս խորիմաստ միտքը հայոց պատմությանը շատ բնորոշ ու հատուկ են ներկայացրել Լազարյանները:

Պատմության գիտական կարևորությունը շատ լավ էին հասկանում նաև Ռուսաստանում: Իվան Երրորդը, որի գլխավորությամբ տեղի ունեցավ ռուսական հողերի միավորումը Մոսկվայի ծուրջ և ձևավորվեց կենտրոնացված ռուսական պետությունը, գործի էր դնում ոչ միայն ուժը, զենքը, այլ փորձում էր ազդել նաև գաղափարապես և տարեգրությունների միջոցով փորձում էր հիմնավորել այդ շրջանների նկատմամբ Մոսկովյան իշխանի իրավունքը: Տարեգրությունների միջոցով նա իրենց ներկայացնում էր որպես ազատարարներ: Հատկապես հիշարժան է Նովգորոդի գրավումը, որի ժամանակ Իվանն իր հետ տարել էր հմուտ տարեգիրների, որոնք պետք է բոյարներին ապացուցեին Մոսկովյան մեծ իշխանի օրինական հավակ

նություններն այդ հողերի հանդեպ, ուստի պատմության իմացությունը, տարեգրություններում եղած նյութերը, առավել ևս տարեգիրների մեկնաբանություններն այստեղ ստանում են կիրառական նշանակություն: Այս գաղափարախոսությունը տարածվել և շարունակում է տարածված մնալ նաև մյուս պետություններում:

Եվ ընդհանրապես՝ պատմությունը <<որոշ իմաստով համարվում է ժողովուրդների Սուրբ գիրքը, նախնիների կանչը սերունդներին, ներկայի բացատրությունը և ապագայի օրինակը>>:

Պատմության սկզբնական ուսուցման մեթոդիկա

Պատմության, որպես առանձին առարկայի դասավանդումը, սկսվում է վեցերորդ դասարանից, սակայն պատմական տեղեկությունների կուտակումը երեխաների կողմից կատարվում է բավականին առաջ, ուստի պատմության ուսուցիչը պետք է շատ հմուտ լինի մտնելով դասարան, քանի որ նրանից գրեթե մարգարեական աշխատանք է պահանջվում երեխաներին հստակ ու անաչառ ներկայացնելու ոչ միայն տարատեսակ ֆաբուլաները, այլ նաև նրա հերոսներին՝ մարդկանց, նրանց օրինակներով ու կերպարներով ազդել սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա, կերտել վաղվա պատմական կերպարներին: Դժվարություն է առաջացնում նաև այն հանգամանքը, որ պատմական անցքերը կատարվում են կարծես <<վարագույրի հետևում>>, և պատմության ուսուցիչը պետք է առավել տպավորչ, ոգևորված, հաստա տապես համոզված ներկայացնի, նկարագրի, պատմի, մեկնաբանի, վերլուծի:

Պատմության մասնագետը պետք է ունենա հստակ հայեցակարգ և մշտապես հիշի, որ անհրաժեշտ է ամրապնդել՝

ա. պատմական փաստերի (վերջիններս համարվում են պատմության հիմքը) հասկանալը

բ. պատմական փաստերի յուրացումը

գ. պատմական փաստերի յուրացման առանձնահատկությունները

դ. պատկերացումը պատմական հեռանկարի մասին

ե. պատկերացումները աշխարհագրական տարածությունների մասին

զ. պատմական փաստերը բացատրելը, եզրակացություններ անելը և գնահատելը

է. պատմական փաստերի ըմբռնման և գնահատման առանձնահատկությունները

ը. ցածր դասարանների աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելը դեպի պատմությունը

թ. ունակությունների դաստիարակությունը

ժ. պատմությունը և քաղաքական դաստիարակությունը

ի. քաղաքացիական զգացմունքների դաստիարակումը, քանզի վատ են պատմության այն դասերը, որոնց երեխաները նայում են չարի ու բարուն անտարբեր:

Մի քանի կարևոր դիտարկում քարտեզի հետ աշխատելու հետ կապված. պետք է այնքան խորացնել աշակերտների գիտելիքները, որ սովորողները կարողանան նշված կոորդինատներով գտնել տեղավայրը, իմանան պատմական քարտեզի պայմանական նշանները, արագ կողմնորոշվեն ուսումնասիրվող պետությունները ներկայացնելիս: Չափազանց կարևոր է նաև զարգացնել սովորողների ճանաչողական առաջադրանքներ կատարելու կարողությունը, որի արդյունքում նրանք կկարողանան ճանաչողական գործունեության ընթացքում օգտվել տրամաբանակն հնարներից, պատմական երևույթները բաժանել բաղկացուցիչ մասերի, համեմատել և բացահայտել դրանց միջև եղած կապն ու փոխներգործությունը, առանձնացնել էական հատկանիշները և դրանց հիման վրա դասակարգել պատմական երևույթները, կարողանա համեմատել երևույթները և յուրաքանչյուրի մեջ առանձնացնել այն, ինչ ընդհանուր է բոլորի համար, այսինքն՝ կատարել ընդհանրացում: Այս ամենի արդյունքում սովորողները կկարողանան ձեռք բերել ճանաչողական խնդիրներ լուծելու կարողություն, այն է՝ տեսնել և ձևակերպել խնդիրը, որոշել, թե ինչն է այդ խնդրի մասին հայտնի կամ անհայտ, գտնել լուծման առավել նպատակահարմար տարբերակներ, լուծել խնդիրը և ստուգել ճշմարտությունը, եզրահանգումներն ապացուցելու համար բերել համապատասխան ապացույցներ, պատասխանել տրամաբանված՝ առանց ավելորդ արտահայտությունների:

Արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում

Ընդհանրապես պատմությունը առավել հետաքրքիր ու կենդանի է, երբ համեմված է ցայտուն օրինակներով, պատմական գործիչների բնութագրումով, իրադարձությունների կոնկրետ ու ցցուն օրինակներով, պատմաճանաչողական էքսկուրսիաներով, ակադեմիական կոնֆերանսներով, թեմատիկ, հոբելյանական, պատմագեղարվեստական միջոցառումներով, պատմավավերագրական կամ գեղարվեստական ֆիլմերի դիտումով: Հենց այս ամենով է, թերևս, որ <<Պատմությունն>> օգնում է սերունդներին անցյալի պատմական փորձի իմացության և իմաստավորման հիման վրա չկրկնել նախորդների սխալները, ընթանալ ճիշտ ճանապարհով և ապահովել առաջընթաց: Ասվածից պարզ է դառնում, որ առարկայի դասավանդման մեջ առանձնակի կարևորություն է ձեռք բերում ազգային պատմության ուսումնասիրումը, որի ամենակարևոր առանձնահատկությունը ժողովրդի պատմական հիշողությունը վառ ու կենդանի պահելն է, քանի որ <<նրանց խաղաղ ոչնչացումը սկսվում է պատմական հիշողության կորստից>>: Ազգային պատմության շարադրումը և դասավանդումը պետք է լինեն հայեցակարգային և ազգային գաղափարախոսությանը համապատասխան: Յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի ընթացքում նրա կերտած հոգևոր ու նյութական արժեքների ամբողջությունը: Հայոց պատմության իմացության միջոցով է հիմնականում ձևավորվում հայի ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ազգի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը: Պատմությունն աշխարհաճանաչողության և ինքնաճանաչողության հիմքն է: Սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայ ազգի և պետության գոյությունն ու շարունակականությունը: Հայոց պատմության դասավանդումը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր: Ուստի պատմական կրթության հիմքում մշտապես պետք է դնել ազգային առանձնահատուկ նպատակներ, առարկայի բովանդակային միջուկը ձևավորել գիտականության սկզբունքի վրա՝ ամրապնդելով այն ճանաչողական, գործունեական-կիրառական և դաստիարակիչ բաղադրիչներով: Դասավանդման ընթացքում պետք է նպաստել

սովորողների աշխարհայացքի, հոգեբանության և բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանն ու ամրապնդմանը, զարգացնել սովորողների հարգանքն ու

հպարտությունը հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային Առանձնահատկությունների հանդեպ: Իսկ դասավանդողի խնդիրը պետք է լինի ոչ թե զգացմունքներ առաջ բերելը, այլ պատմական փաստերի ու իրադարձությունների անաչառ ու անկողմնակալ վերլուծությունն ու դրանց օբյեկտիվ գնահատումը: Յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը լի է <<սև ու սպիտակ>> էջերով, հակասական ու ցավոտ հիմնախնդիրներով ու թեմաներով: Դրանց ուսումնասիրման արդյունավետ միջոցները տարատեսակ այցելությունները, հանդիպումները, գործնական աշխատանքների կատարումն է, քանի որ գաղտնիք չէ, որ միտքն արդյունավետ է գործածության մեջ: Ուստի առաջարկում ենք առավել հաճախակի կազմակերպել տարատեսակ գործնական աշխատանքներ: Սխալված չենք լինի ասել, որ ժողովրդական առածն այս դեպքում տեղին է բնորոշում. <<ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել>>: Ուստի ցանկալի կլինի հնարավորինս հաճախակի կազմակերպել այցեր և էքսկուրսիաներ, որոցից առաջ և ավարտից հետո անպայման սովորողները պետք է կատարեն գործնական աշխատանք: Դրանց արդյունքում սովորողների մոտ առավել քան կամրապնդվի հայրենաճանաչողության ու հայրենասիրության ընկալումները: Կարելի կազմել մոտավորապես այսպիսի աղյուսակ և առաջարկել սովորողների դրանք լրացնել.

Ղեկավար՝ _____ Ամսաթիվ՝ _____

Մասնակիցների թիվը՝ _____ Դասարան՝ _____

Սկիզբը՝ _____ Ավարտը՝ _____

Պատմաճանաչողական էքսկուրսիա

1. Էքսկուրսիայի անվանումը՝_____

2. Գնում ենք պատմական իրադարձության <<հետքերով>> (էքսկուրսիայի երթուղին)_____

3. Թեմայի ընտրությունը՝_____

4. Նպատակը՝ _____

5. Աշակերտներին տրվող ճանաչողակն աշխատանքների մշակում՝

Ա) էքսկուրսիայից առաջ_____

Բ) էքսկուրսիայից հետո_____

Ամփոփում՝_____

6

Պատմության առանձնահատուկ հետաքրքիր ու գրավիչ բաժիններից է ռազմական պատմությունը, որի միջոցով յուրօրինակ կապ է հաստատվում սերունդների միջև, և ամեն եկող սերունդ ձգտում է նմանվել, կրկնօրինակել կամ քաջությամբ գերազանցել իր նախորդներին: Իսկ շատ հաճախ ռազմական գործողությունը կարող է դառնալ և՛ ներշնչանքի, և՛ սրբագործման աղբյուր: Այն առավել գործնական ուսումնասիրելուն կարող է օգնել հետևյալ աղյուսակը.

Առարկա՝_____ Ազգանուն, անուն՝_____

Ուսուցիչ՝_____ Դասարան՝_____

Ամսաթիվ՝_____ Մակարդակ Ա/Բ_____

Ռազմական գործողության ուսումնասիրում

Գործնական աշխատանք

1) Ռազմական գործողության տեսակը՝ _____

2) Ռազմական գործողության անվանում՝ _____

3) Ռազմական գործողության տարեթվերը՝ _____

4) Պատերազմի պատճառը և բնույթը՝

ա) հիմնական հակասությունները, որոնցից ծագում է ռազմական գործողությունը՝ _
_____

բ) ռազմական գործողության նախապատրաստումը, ուժերի հարաբերակցությունը՝ _
_____

գ) հակամարտող կողմերի պլանները՝ _____
_____

5) Պատերազմի ընթացքը՝

ա) ռազմական գործողության առիթը և սկիզբը՝ _____
_____

բ) հիմնական փուլերը և գլխավոր ընդհարումները՝ _____
_____

գ) ռազմական գործողության ավարտը և հաշտության պայմանագրի կնքումը՝ __
_____

6) Կարող եք նշել ՝

ա) ռազմական գործողության ազդեցությունը միջազգային հարաբերությունների հետագա ընթացքի վրա՝ _____
_____

բ) հասարակական-քաղաքական կարգերի ազդեցությունը հակառակորդների դրության վրա՝ _____
_____

Պատմության ուսումնասիրման ընթացքում չափազանց կարևոր է պատմական գրքերի ընթերցումը, ուսումնասիրումը: Դրանք, անխոս, մեծապես օգնում են արժեքային համակարգի ձևավորմանը, սակայն խիստ անհրաժեշտ է պահպանել թեմատիկան և տարիքային առանձնահատկությունը: Ստուգելու, պարզելու հանձնարարված գրականության ունեցած արժեհամակարգային դերը, կարելի առաջարկել սովորողներին լրացնել հետևյալ աղյուսակը:

Առարկա՝ _____ Ուստարի՝ _____

Ուսուցիչ՝ _____ Դասարան՝ _____

Աշակերտ (ուհի)՝ _____ Ամսաթիվ՝ _____

Կարդացած գրքի ներկայացում

Ա) Գրքի հեղինակը և վերնագիրը _____
_____

Բ) Գրքում նկարագրվող դարաշրջանը և պատմական իրադարձությունները_____
_____
_____

_____
_____
_____

Գ) Գրքում գործող հերոսները, Ձեր վերաբերմունքը նրանց նկատմամբ_____
_____

_____
_____
_____
_____
_____

Դ) Փորձեք մեկնաբանել, խնդրեմ, Ձեր տպավորություններն ու կարծիքը կարդացածի մասին_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ե) Ուրիշ էլ ինչ գործեր ունի հեղինակը և ինչի մասին են դրանք _____
_____
_____
_____

Յուրաքանչյուրին էլ քաջ հայտնի է, որ պատմության ուսումնասիրման հիմքում ընկած են սկզբնաղբյուրները, որոնք ուսումասիրելը, թեև բարդ և տևական աշխատանք է, սակայն մյուս կողմից բացարձակ հարստացնում է ազգի արժեքային համակրգն ու աշխարհայացքը, մղում նրան նորանոր նվաճումների: Այն առավել հետաքրքիր ու գործնական դարձնելու համար կարելի է սովորողների առաջարկել լրացնել հետևյալ աղյուսակը.

Առարկա՝ _____ Ուստարի՝_____

Ուսուցիչ՝_____ Դասարան՝_____

Աշակերտ (ուհի)՝_____ Ամսաթիվ՝_____

Աշխատանք սկզբնաղբյուրի հետ

9

1.Ո՞վ է սկզբնաղբյուրի հեղինակը և ի՞նչ նպատակով է ստեղծել այն_____

2.Արդյո՞ք հեղինակը իրադարձությունների նկարագրության մասնակից է, թե ստեղծել է ուրիշներից լսածի կամ տեսածի հիման վրա_____

3.Ե՞րբ է ստեղծվել սկզբնաղբյուրը_____

4.Արդյո՞ք սկզբնաղբյուրի հեղինակը չեզոք է, թե ունի որոշակի շահագրգռվածություն, որն ազդել է նրա ստեղծածի վրա_____

5. Սկզբնաղբյուրը պարզապես տեղեկացնող է, թե ունի համոզելու նպատակ_____
_____

6. Սկզբնաղբյուրի ոճի միջոցով պարզեք՝ հեղինակը փորձում է անաչառ լինել, թե համոզող_____

Պատմության ուսումնասիրմանը, նրա տպավորիչ ընկալմանը մեծապես նպաստում են ֆիլմերը, որոնք կարող են յուրօրինակ խթան հանդիսանալ հուզակամային որակների ձևավորմանն ու զարգացմանը: Իհարկե նախքան ֆիլմի դիտումը պետք է հստակ պատկերացնել դրա կրթադաստիարակչական դերը, նշանակությունը: Ակնկալվող և ստացված արդյունքները պարզելուն կնպաստեն այսպիսի գործնական աշխատանքների կատարումը

Առարկա՝ _____ Ուստարի՝_____

Ուսուցիչ՝_____ Դասարան՝_____

Աշակերտ (ուհի)՝_____ Ամսաթիվ՝_____

Ֆիլմի վերլուծություն

1Ֆիլմի անվանումը՝_____

2Ֆիլմի տեսակը՝_____

3Նշեք այն գաղափարները, կերպարները, որոնք ակնկալում էիք տեսնել նախօրոք և որոնք իրականացան ֆիլմի դիտումից հետո՝_____

_____

10

4 Ո՞րն էր ֆիլմի հիմնական գաղափարը՝_____

_____

5 Ինչպե՞ս ազդեց ֆիլմը ձեր բանականության վրա: Ի՞նչ զգացիք_____

_____

6 Ի՞նչ սովորեցրեց ֆիլմը ձեզ_____

Պատմության դասաժամերին բավականին արդյունավետ աշխատանք կարելի կատարել նկարների վերլուծության միջոցով, որի ընթացքում կարող ենք բացահայտել սովորողների ընկալումներն ու պատկերացումները տարբեր դարաշրջանների, իրավիճակների, դեպքերի վերաբերյալ: Որպես գործնական աշխատանք կարելի է օգտագործել հետևյալ աղյուսակը.

Առարկա՝ _____ Ուստարի՝_____

Ուսուցիչ՝_____ Դասարան՝_____

Աշակերտ (ուհի)՝_____ Ամսաթիվ՝_____

Նկարի վերլուծության հարցաթերթիկ

1.Նկարի հեղինակը՝_____

2.Նկարի վերնագիրը՝ _____

3.Նկարի ստեղծման ժամանակաշրջանը՝_____

4.Գործող անձինք՝_____

_____

5.Առարկաներ, խորհրդանիշներ՝_____
_____

6.Գործողություններ՝_____
_____

_____

Պատմության գրեթե յուրաքանչյուր դասաժամի խոսվում, նկարագրվում, մեկնաբանվում է այս կամ այն պատմական անհատը, որի կերպարը պետք է ուղղորդող դեր և խթան հանդիսանա սովորողների հայրենասիրական, իրական արժեքներին տուրք տալու, ազգապահպան գիտակցությունն արթուն պահելու գործում: Այն ևս պետք է մշտապես գործածական պահել, որի համար կարելի է օգտվել նման աղյուսակներից.

Առարկա՝ _____ Ուստարի՝_____

Ուսուցիչ՝_____ Դասարան՝_____

Աշակերտ (ուհի)՝_____ Ամսաթիվ՝_____

Պատմական անհատի բնութագրում

1.Պատմական պայմանները, որոնց մեջ ընթացել է անհատի գործունեությունը (երբ և որտեղ է ապրել պատմական գործիչը)_____
_____

2.Խնդիրներ, որոնք ձգտում է լուծել պատմական գործիչը, դրանց լուծման ուղիները և մեթոդները_____
_____

3.Որևէ դասակարգի կամ կուսակցության պատկանելը և դրա արտահայտիչ լինելը___
_____

4.Նրա արտաքին նկարագրությունը և անձնական որակները_____
_____

5.Պատմական անհատի գործունեության արդյունքների գնահատումը_____
_____

Հարկ ենք համարում նաև նշել, որ պատմության դասավանդման շրջանակներում են սովորաբար առավել հաճախ կազմակերպվում տարատեսակ և բազմաբովանդակ միջոցառումներ, որոնք նույնպես պետք է նպաստեն սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Եվ որպեսզի այդ աշխատանքները չլինեն ինքնանպատակ և ուղղակի պարտականություն կատարելուն նպաստող քայլ, պետք է ամեն աշխատանք վերլուծել, վերհանել ուժեղ և բաց կողմերը՝ հետագա գործունեության ընթացքում դրանցից խուսափելու, կամ լավագույն կողմերն էլ ավելի զարգացնելու համար: Իսկ սովորողներն այդ առումով կարող են ամենալավ օգնականը լինել մեզ,

ուստի կարելի է նրանց առաջարկել վերլուծության հետևյալ աղյուսակը.

Ղեկավար՝ _____ Ամսաթիվ՝_____

Ազգանուն, անուն ՝ _____ Դասարան՝_____

Միջոցառման մասնակցության գնահատում

1. Միջոցառման անվանումը՝_____

2. Միջոցառման ընթացքում ինձ դուր եկավ_____

3. Միջոցառման ընթացքում ինձ դուրչ եկավ_____

4. Հաջորդ անգամ նման միջոցառում անցկացնելիս ես կցանկանայի_____
_____

5. Կարո՞ղ եք ամփոփ ներկայացնել միջոցառման ազդեցությունը արժեհամակարգի ձևավորման վրա_____
_____

6. Այլ առաջարկներ_____

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ գործնական և տեսական կապը ամրապնդե

Եզրակացություն

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ գործնական և տեսական կապը ամրապնդելով անհրաժեշտ և հնարավոր է հարափոփոխ արդի դարաշրջանում սովորողներին դաստիարակել ազգային և հայրենասիրական ոգով: Պատմության ուսուցիչը մանկավարժական հիմնարար սկզբունքների հիման վրա կազմակերպելով ուսուցման գործընթացը, կարող է իր դասավանդած առարկան դարձնել սերունդներին իրար կապող հիմնական օղակը, նրա միջոցով պահպանել և փոխանցել ազգերի և ժողովուրդների պատմական հիշողությունը, պատմական ժառանգությունը և փորձը ծառայեցնել սովորողների բարոյական ու մշակութային կատարելագործմանը, հասարակության մեջ իրենց ուրույն տեղը գտնելուն, իր պատմական արմատները ճանաչելունև պատմական հիշողության ձևավորմանը: Եվ ընդհանրապես. պատմության մասնագետն իր դասավանդման հիմքում պետք է մշտապես ունենա և զարգացնի հետևյալ գիտա-մեթոդական մոտեցումները՝

ա. պետականության անհրաժեշտության՝ որպես ազգի հարատևման գրավականի գիտակցության ձևավորումն ու ամրապնդումը

բ. ազգային գաղափարախոսության՝ որպես պետականության պահպանման և զարգացման կարևոր նախադրյալի գիտակցության ձևավորումը

գ. քաղաքացիական գիտակցության և պետական մտածելակերպի ձևավորումն ու ամրապնդումը

դ. պետություն-անհատ, պետություն-հասարակություն ներդաշնակ հարաբերությունների գիտակցության ձևավորումը

ե. հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդումը:

Օգտագործված գրականություն

1.Ա. Ե. Տեր-Գրիգորյան <<Էջեր հայ մանկավարժական մտքի պատմությունից>> Եր. 1980թ.

2. Ս. Պ. Մանուկյան <<Ազգայինը համամարդկային դաստիարակության համակարգում>> Ազատամարտ Եր. N18 Եր. 1994թ.

3. Գ Թամամյան <<Պատմության ուսուցման արդյունավետության մի քանի հարցեր>> Եր. 1972թ.

4. Լ.. Օխտինա <<Դասի հոգեբանական հիմունքները>> Եր. 1979թ.

5. Ն. Դայրի <<Գլխավորի յուրացումը դասի ժամանակ>> Եր. 1986թ.

6. Վերապատրաստման ձեռնարկ Եր. 2009թ.

Բովանդակություն

Ներածություն ---------- 1-2

Պատմության սկզբնական ուսուցման մեթոդիկա---------- 3-4

Արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում--5-13

Եզրակացություն---------- 14

Օգտագործված գրականություն---------- 15

Բովանդակություն---------- 16